

Փորձ եւ Գրութիւն

Մարուշ, *Տարբերակներ*, Հալէպ, 1995.

Հալոց, Հալէպ, 1998.

Գիշերներ, Հալէպ, 2000:

Մարուշ երամեան, իր բանաստեղծի անունով՝ միայն Մարուշ, ունի հոս նշուածներէն զատ՝ նաեւ ուրիշ հատոր մը, առաջինը, *Հում բռ-
ռերն իմ կը բերեմ դիմակներու* (1991), զոր չեմք տեսած:

Նոր բանաստեղծի մը դէմ յանդիման, միշտ նոյն հարցումը. ինչպէ՞ս խօսիլ բանաստեղծութեան մասին: Երբ կատարեալ անծանօթն է ան, ուրիշէ՞ գտնել շաւիղ մը, որ տանէր դէպի անոր ծագման կէտը: Թերեւս այս անգամ հարց տալով մենք մեզի, թէ բանաստեղծութենէն ի՞նչ կը սպասենք, ի՞նչ կը փնտոենք հոն, վերջ ի վերջոյ: Ու պատասխանը. շաւիղ մը, ծագման կէտը: Որոնում մը, կատարելապէս անճանական, ո՛չ թէ գրականութիւն ու արուեստ: Ուրեմն նաեւ ժխտումը ընթերցողին, անոր դուրս գլուխը գրութեան ոլորտէն: Ամէն ինչ կը սպասենք ուրեմն, բացի բանաստեղծութենէ: *Տարբերակներ* կոչուած հատորին մէջ, Մարուշ կը ծանուցէ արշաւ մը, սպասումի եւ փնտտումի: Նախ յոգնակի: Կը փնտոենք, կ'ըսէ, *հրաշք հատիկը աւագին*, ամփոփուելու համար հոն, նաեւ՝ *մէկ հոգի ալ մեզի պէս*, մտերմութիւններու ափունքին: Բայց յետոյ՝ եզակի: Կը փնտոենք, կ'ըսէ գրեթէ, *մութ գաղտնիք* մը, ինչ որ ի միջի այլոց՝ կը բացատրէ գրքին վերնագիրը, գաղտնիքը *փոխուելու միշտ եւ միշտ նոյնը մնալու*:

Զարմանալի է: Բանաստեղծութենէն կը սպասենք ինչ որ մերը չէ, բացարձակապէս, պիտի չըլլայ երբեք. ինչ որ պիտի չճանչնայինք իսկ եթէ հանդիպէինք, քանի որ կրնանք ճանչնալ միայն ինչ որ կը ճանչնայինք սկիզբէն, ընտանին, երբեք՝ անտանելին: Կը սպասենք ուրեմն կատարեալ այլութիւնը ցանկութեան, հրաշքը կարօտին, *առանց բառի մերձեցումի գուգաւորման*: Այդ է, որ կը գրուի Մարուշի վերջին երկու հատորներուն մէջ: Իրենց նուագագոյնին հասած բառերով: Ցանկութիւնը իբրեւ այլութիւն, երբ *Միգամած այլութեանէ մը կը բարձրանամ հորիզոնիդ*: Նաեւ՝ ցանկութիւնը այլութեան, ցանկութիւնը՝ *տարբեր ակեր* ըլլալու (ուր կը տրուի նախորդ

Բանագործություն եւ այլ

գրքի տարբերակներուն՝ տարբեր մեկնաբանություն մը, աւելի հետա-
քննական թերեւս) կամ չըլլալու, չըլլալու մէկ, մէկ տարբերակ ընդ
միշտ: Ուրեմն ցանկութիւնը կորսուելու, առանց տրամախոհական վե-
րադարձի: Կորսուիլ ըլլալու համար ինչ որ ե՞մ: Ո՛չ: Բայց ճիշդ է որ
կան նաեւ *կաթիլները վերադարձիս, նանապարհը ինձմէ ինծի, եղայ
գիտը*, որոնք կը թելադրեն այդպիսի վերադարձի մը գաղափարը եւ
մասամբ կը հակաճառեն ըսածս, յառաջագունէ, գրութեան մէջ ընդե-
լուզուած հակաճառութեամբ մը:

Փնտռելը հոս, այսինքն՝ հակաճառութենէն առաջ, իմաստ մը կը ստա-
նայ, ո՛չ թէ իբրեւ մութ գաղտնիք, ո՛չ թէ իբրեւ անհեթեթին մէջ վի-
պապաշտ մտերմութիւն, այլ իբրեւ կորուստը ի՛նք, *կը ջնջուիմ*, իմաստ
կը ստանայ իբրեւ անիմաստութիւնը կորուստին, մարմնական: Խաչե-
լութիւն մը այս մէկը, որուն սակայն պիտի *երբեք երբեք... չհասնիմ*:
Այսպէս՝ շարժում մը վայրիվերական, խորխորատներ բարձրանալ մը,
ջրվեժներ դէպի վեր, ծալքեր որ կը փակուին, բայց երբեք՝ *խաչելու-*
թիւնը:

Ձեմ ուզեր սակայն աւելիով վերացական դարձնել այս տողերը, *Հա-*
լոցի, յետոյ՝ Գիշերներու, որոնք ամէն ինչ են բայց ո՛չ՝ վերացական:
Կը պատմեն մարմիններու մերձեցումը, շփելութեամբ, անվայել բա-
ռերով, համարձակ, երբեմն աներեւակայելիօրէն համարձակ անվայե-
լութեամբ մը, ան-ամօթութեամբ նաեւ, անմեղութեան անամօթու-
թեամբը: Եւ կը տարուիմ խորհելու, որ կին մը միայն կրնար այդ հա-
սունութիւնն ունենալ, այդ յաղթական ինքնավստահութիւնը, որպէսզի
գրէր գուգութիւնը մարմիններուն, առատութիւնը ընող խեղդամահ,
աստղափրփուր հոսքը տաք: Առանց երբեք ապաւինելու աչքին ուրեմն,
պատկերին ու “պատկերակայութեան”, ֆանթազմին, երեւակ(այակ)ան
ցնորքին, այդ է հարցը:

Գրել առանց աչքի, մութին մէջ: Եւ այդ է պատճառը, որ ո՛չ մէկ առն-
չութիւն չունի այս բանաստեղծութիւնը էրոթիզմ՝ կոչուածին հետ:
Անշուշտ՝ ըստ իս: Ըսեմ նաեւ, որ Սա՛ատի Եռսէֆի էրոթիք բանա-
ստեղծութիւնները յառաջաբանելու ճիգին մէջ (*Բանաստեղծութիւնն*
տարեգրքի առաջին հատորին մէջ) Մարուշ գատորոշում մը կ'ընէր
պոռնկագրութեան եւ էրոթիքայի միջեւ: Այս ալ թող ըլլայ ի՛մ խոս-
տովանութիւնս եւ ի՛մ սահմանափակումս. հակառակ գործադրած յա-
րատեւ ճիգերուս, հակառակ հետեւողական մտատանջութեանս, երբեք
չեմ կրցած հասկնալ այդ տարբերութիւնը: Բայց մէջբերեմ, որպէսզի
ընթերցողը կազմէ ինքն իր կարծիքը. “Եթէ մէկը (պոռնկագրութիւնը)

նիւթեղէնն է, որ կը ներկայացնէ, երկրորդը (էրոթիֆան) հոգեկանն ալ կը ներառնէ, փորձելով արուեստով վերարտադրել մարդկային առօրեայի հիմնական դրոյթներէն մէկը” (*Բանաստեղծութիւն տարեգիրք*, էջ 41):

Հակադրութիւնը հրամցուած ֆերթողութեան եւ հոս ըսուածին միջեւ կը հրաւիրէ նշմար մը, կարճ, ֆննդատութեան մասին: Արուեստը, այո, պէտք ունի ֆննդատութեան: Երկու գաղափարները միասին ծնած են: Արուեստը ճաշակի հարց մըն է, ֆննդատութիւնն ալ կ’որոշէ ճաշակին մասին, կը սահմանէ, յատկանիշները կը վերբերէ, կը համագրէ, կը մշակութայնացնէ: Տեղ մը կու գայ սակայն, “արդի” կոչուած արուեստին մէջ, ուր գրութիւնը կը զանցէ ճաշակը, կը փորձէ ինքզինք, կը խնդրականացնէ արուեստը եւ ֆննդատութիւնը միեւնոյն ժամանակ: Ասկէ անդին, ընթերցումի արարքը չի կրնար ըլլալ այլեւս ֆննդատութիւն, որովհետեւ տարուած է իր կարգին գրութեանական անհունացումի շարժումէն: Եւ մատնուած՝ երկդիմութեան մը: Կրնայ կրկնել հեղինակին ուզածը, ճաշակ որոշողի ծիծաղելի դեր մը խաղալ տակաւին, ֆննել արուեստը, հրամցուած, գեղեցկութիւնը, նրբութիւնը, հմայքը, կարդալ բանաստեղծութիւն մը, փոխանակ կարդալու գրութիւնը: Իսկ եթէ տարուի գրութենէն, գրութեանականութենէն, պիտի չհետեւի հեղինակային խօսքին, պիտի չնշէ ձեռով մը՝ հեղինակը: Ինչ որ կը փաստէ, թէ պէտք չէ խօսիլ բանաստեղծութեան մասին: Զեմ ուզեր ըսել՝ անհրաժեշտ չէ: Այլ՝ սխալ է խօսիլը:

Մարուշի գրութիւններուն մէջ անցումի պահ մը կայ, զոր նշեցի վերը շատ արագ կերպով: Անցումի պահ մը արուեստէն դէպի ուրիշ բան, կոչեցէ՛ք գայն ինչպէս որ կ’ուզէք: Այդ պահն է, երբ Հալոցին մէջ՝ “տարբերակ”ը կը հրամցուի տարբեր մեկնաբանութեամբ, ինքն իրմէ տարբերակուած: Սկիզբը՝ տարբերակները կ’ենթադրէին բնանութ մը, սկզբնական, թեմա, ես, ինքնութիւն, վերադարձ: Այն պահէն սկսեալ սակայն երբ տարբերակը կ’անորոշանայ, կը դառնայ տարբեր-ակ, կ’անհունանայ ան, կը մտնէ գրութեան ցանկութեան մէջ ու ասկէ անդին՝ անկարելի է գիտնալ, թէ ո՛ր կ’ուղղուի այդ ցանկութիւնը: Տարբերակումը անհունացում մըն է ցանկութեան, տրամադրուածութիւնը ընթերցումին, ջնջումը հեղինակին նաեւ, ուզուած այլեւս իբր այդ, անհասանելի շարժումով մը: Մարմնական մերձեցումը կը մտնէ լեզուին մէջ (*լեզուս եւ դուն այս երկուքը մարմնիս վրայ կը հաստիւն...*): Ուզուած: Մերձեցումն է, որ կ’ուզէ կորուստը գրութեան մէջ, իբրեւ ճիշդ, նշացող գիշերներուս փոխարէն: Մարմինը տալ լեզուի հազար խաղերուն...:

“Փորձ” եւ “գրություն” ուրեմն, հոս է որ կը յանգինք: Ո՛չ թէ երկուքը սահմանազատելու, այլ՝ անոնց անփակտելիությունը խուզարկելու փորձառության: “Փորձ” բառը կը գործածեմ հոս experienceի կրկնակի իմաստով, յստակ է: Ու վերստին՝ ոչինչ կայ վերացական ըսածիս մէջ: Խնդրոյ առարկայ է աչքին տեղը: Սեռականությունը մը առանց աչքի միջամտութեան, ըսուեցաւ վերը, առանց արեւի: Ինչ որ կարելի է հասկնալ երկու իմաստով: Մէկը՝ պարզ ու հոգեբանական. աչքը (կը կարծուի) փչչ գեր կը խաղայ կնոջական սեռականութեան մէջ: Բայց երկրորդը՝ էական եւ ըստ ամենայնի՝ ո՛չ հոգեբանական: Երբ կը գատորոշեմք ի հարկէ՝ փորձ ու գրություն, սեռային մերձեցումը փորձ մըն է ուրիշներու կարգին, կ’ապրուի, յետոյ՝ կը նկարագրուի իբրեւ “առօրեայի դրոյթներ”էն մէկը, կը պատկերագրուի: Կը վերածուի պատկերի, արուեստի կամ պոռնկագրութեան, անգամ մը եւս: Ու պատկերը պէտք ունի արեւի, ոչ միայն գրուելու, այլեւ դիտուելու համար: Պատկերը չէք կրնար դիտել կատարեալ գիշերուան մէջ: Ֆիշեցէ՛ք պահ մը արական կամ նոյնիսկ իգական (Histoire d’O) էրոթիքային-պոռնկագրութեան բոլոր սովորական (եւ գրական ինչպէս սեռային առումով՝ ձանձրացուցիչ) երեւոյթները, անոնց ինքնահանդէկարա՝ ու պատկերագրությունները, համոզուելու համար որ անոնց մէջ փորձը յառաջագունէ տրամադրուած է նայուածքի մը, ուրեմն՝ արեւին, ո՛չ թէ գիշերուան: Կասարեալ գիշերուան մէջ՝ նայուածքը չի բանիր:

Էրոսի կալուածը ուրեմն՝ գիշերային չէ ինքն ըստ ինքեան: Նայուածքի թագաւորութենէն դուրս չէ բնաւ: Ինչ որ գայն գիշերային կը դարձնէ՝ նայուածքէն քայլ մը ետ անցնելու հաստատ ծրագիրն է: Երբ կը նկարագրեմք, կը պատկերեմք, կը պոռնկագրեմք, կ’երեւակայեմք (ու ե՞րբ արդեօք չենք երեւակայեր), արեւը միշտ կը բնակի մեր խօսքին ու փորձին մէջ, կը գատէ մէկը միւսէն: Նայուածքէն ենթադրեալ արեւը: Արեւն է, որ կ’երեւցնէ ու կը ցանկացնէ: Ատկէ աննշմարելի ետ-քայլով մը, ծրագիր մը կը սկսի, կը սկսի հարցումով մը. ինչպէ՞ս գրել (ցանկությունը, մերձեցումը) առանց արեւի, ուրեմն մութին մէջ, գիշերուան մէջ: Ինչպէ՞ս գրել ձերբագատուելով աչքի, արեւի, երեւումի, երեւակայութեան, ֆանթազմի, օգնութենէն: Գիշերային փորձ ուրեմն, պարտադրաբար: Գիշերուան ուժին, ուժի բացակայութեան ենթարկուող գրողական ծրագիր: Հո՛ւ է, որ Մարուշի “բանաստեղծություն”ը կը ստանայ իր գուտ արդիական գունաւորումը: Կը ծրագրէ գրել գիշերուան մութին մէջ, առանց լոյսի-մութի-կերտնի աջակցութեան: Կը ծրագրէ զգայել, թէ ի՛նչ պիտի ըլլայ արդիւնքը երբ մերժուի աչքի

Պարականոն Գրություններ

Արթուր Անդրանիկեան, *Այլընժանց*, Երեւան, հրատ. Զուարթնոց, 1993,
Տարածամ, Երեւան, Սփիւնֆ, 1995,
Մերկասառոյց, Պէյրուք, Սիփան հրատ., 1996,
Շողէջ, Երեւան, Վան Արեան հրատ., 1998:

Հինգ գիրք ունի Արթուր Անդրանիկեան: Յիուածները՝ մեր տեսածներն են: Կ'ուզեմք հոս միայն երեւոյթը նշել: Քննութիւնը, դիպուկ խօսքը, ընթերցումը, կու գան աւելի ուշ, տարբեր վայրի ու պայմաններու մէջ: Կ'ուզեմք միայն նշել տարբերութիւնը այս բանաստեղծին: Հայաստանեան արտադրութեան մէջ բացառիկ տեղ մը կը գրաւէ ան, միակը՝ հոն իր տեսակին մէջ, որովհետեւ չի հետեւիր անոր աւանդութեան: Զի խաղար ոտանաւորին խաղերը, չ'օգտագործեր երբեք ժողովրդականն ու ժարգոնայինը: Կը պատկանի մթաւոյ բանաստեղծներու հարուստ աւանդութեան մը: Նման է երբեմն՝ ֆրանսական բանաստեղծութեան որոշ տեսակի մը, ըսեմք՝ Ռընէ Շարեան: Ինչպէս բոլոր մթաւոյ բանաստեղծներու պարագային, իր տողերը յարակարծօրէն՝ ողողուած են լոյսով, գոնէ վերջին երեք հատորներուն մէջ: Ակնախօիդ ընելու չափ ուժով լոյսով: Բնանիւք չունի: Առաջին ակնարկով՝ չունի ո՛չ մէկ աղերս այժմէութեան հետ, կ'ուզեմ ըսել՝ երկրի կամ աշխարհի այժմէութեան հետ (չեմ ուզեր ըսել անշուշտ՝ բանաստեղծութեան, ընդհակառակը), այն մէկուն հետ՝ որ կը դառնայ առօրեայ, կը դառնայ աշխարհահայեացք, կը դառնայ գաղափար, կը նշայ թերթերէն ու հեռատեսիլէն, հրապարակներէն ու բառուղիներէն աշխարհի:

Ամենատարրական երեւոյթներուն հետ տեսական լեզու գտած ըլլալու, կապ մը հաստատած ըլլալու տպաւորութիւն մը կը ձգէ: Զ'ըսեր օրէնքը, երբեք, իր գրութեան, իր գրելուն: Շարքերը թուարկուած են, թուականներով: Ամէն օր գրուած, օրինակ՝ արթննալուն պէս: Գրելու յամառութեամբ մը, կուրութեամբ մը, երբեմն՝ ապշեցուցիչ: Առանց ձգելու որ օրուան գաղափարները կազմուին մտքին մէջ: Ուրեմն գաղափարներէ, նոյնիսկ՝ պատկերներէ առաջ հոսող բանաստեղծութիւն մը: Սիրահարութիւն մը բառերուն հանդէպ: Պայմանաւ որ հնչեն: Կեանքը, նայուածքը, ներքին հոսանքները ուրիշ բանով չեն շինուած ի